

#ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻԶԵՏ

Հրաշալի հնարավորություն երիտասարդների համար համատեղելու տեսական և գործնական գիտելիքները՝ հետազայում մեր թիմը համալրելու հեռանկարով:

#ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻԶԵՏ

Ծրագրի տևողություն՝	3 ամիս
Ծրագրի անցկացման վայր՝	ք. Երևան
Ծրագրի մեկնարկ՝	Մարտի 1 - 15, 2020թ.
Հայտարարության սկիզբ՝	Հունվարի 31, 2020թ.
Հայտարարության ավարտ՝	Փետրվարի 12, 2020թ.

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր երիտասարդի առաջնային մտահոգությունը աշխատաշուկայի պահանջներին բավարարող աշխատանքային փորձի ձեռքբերումն է: Փորձի կուտակումը պետք է սկսել դեռևս ուսումնառության ժամանակ:

IDBank-ի **#ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻԶԵՏ** ծրագրի շրջանակում երիտասարդները հնարավորություն կունենան կիրառել իրենց գիտելիքները վաճառքի, սպասարկման ոլորտում, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ բանկային գործում: **Ծրագրի ավարտին իրականացվելու է ատեստավորում, որի արդյունքներով լավագույնները կշարունակեն իրենց կարիերան IDBank-ի հետ:**

Ծրագիրը մեկնարկել է 2019թ. և արդեն երկու անգամ իրականացվել, որի արդյունքում շուրջ 25 ուսանող սկսել են իրենց կարիերան ԱյՖի Բանկի հետ:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

- լինել բակալավրի 4-րդ կամ մագիստրատուրայի ուսանող կամ վերջին 5 տարիներին ավարտած և անփորձ երիտասարդ,
- ունենալ լավ առաջադիմություն,
- ունենալ տնտեսագիտական/ֆինանսական մասնագիտացում,
- տիրապետել օտար լեզուների /ռուսերեն, անգլերեն/,
- ունենալ հաղորդակցման գերազանց հմտություններ,
- և **ամենակարևորը՝** լինել նախաձեռնող, նորարար գաղափարներով և էնտուզիազմով լի անհատականություն:

Եվ այսպես, եթե մոտիվացված ու նպատակասլաց ես, համապատասխանում ես վերոնշյալ չափանիշներին և քեզ տեսնում ես այս ոլորտում, ապա օգտագործի՛ր հնարավորությունը առաջին քայլն անելու՝ միանալով IDBank-ի թիմին:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել «ԱյՖի Բանկ»-ի **դիմում-հայտը** և/կամ ինքնակենսագրականի (CV) հետ միասին ուղարկել hr@idbank.am հասցեին՝ նամակի թեմա (subject) դաշտում պարտադիր նշելով ծրագրի անվանումը՝ **«ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻԶԵՏ»**:

Նշենք նաև, որ ստացված յուրաքանչյուր դիմում-հայտ մանրամասն կուսումնասիրվի ՄՌԿ վարչության կողմից և, հաշվի առնելով դիմորդի համապատասխանությունը Ծրագրի պահանջներին, ընտրված թեկնածուները կիրավիրվեն թեստավորման և հարցազրույցի: